Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

Կ-451-23.01.2020-ՏՏԳԲ-011/0 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, փոփոխության(լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը փոփոխությունը(լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի(հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջակությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված	1. Նախագծի 1-ին հոդվածում «հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7-րդ մասով» բառերն առաջարկում ենք փոխարինել «հոդվածում լրացնել նոր՝ 7-րդ մաս» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված	2. Նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերն առաջարկում ենք փոխարինել «կառավարությունը» բառով՝ հիմք ընդունելով Օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը եւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15 -րդ հոդվածի 2-րդ մասը:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է